

Հայոց Վաչէ. եւ լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր Տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն Նորա: 6 Ապա ժողովէր եպիսկոպոսապետն Վրթանէս, մխիթարէր զամենեսեան, եւ զինքնին թագաւորն զխոսորով, եւ զաւրսն ամենայն, որք բազում անձկայրեաց տրտմութեամբք եւ արտասուակաթ ողբովք եւ ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք եւ անհնարին աշխարանաւք պաշարեալք, զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ՝ սգային: 7 Չորս մատուցեալ սփոփէր զնոսա մեծն Վրթանէս, եւ ասէր.

8 Մխիթարեցարո՛ւք ի Քրիստոս. վասն զի մանաւանդ որք մեռանն, նոքա յաղագս աշխարհի եւ եկեղեցեաց եւ աստուածագործ արինացն տուչութեան, զի մի՛ գերեալ քանդեսցի աշխարհս, եւ սուրբ եկեղեցիքն աւերեսցին¹, եւ կամ մարտիրոսք անարգեսցին, եւ կամ սուրբ սպասքն ի ձեռս պղծոցն եւ անաւրինացն անկցին, եւ սուրբ ուխտն այլայլեսցի, եւ որդիք մկրտութեան գերութեամբ անկցին ի պեսպես պղծութիւնս անաւրէնութեան կարգաց պաշտամանց: 9 Եւ եթէ զաշխարհս ունիցին արդէք թշնամիքն, եւ զհրեանց զանաւրէն զանկրան զանաստուած կրանիցն զաւրէնս աստ արդէք հաստատէին. որ, զոր ինդրեմքս, քա՛ւ եւ մի՛ լիցի: 10 Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի՛ յայսպիսի աստուածապաշտ եւ աստուածասէր աշխարհ անաւրէնութիւն մտեալ, չարի կամացն ի ծառայութիւն արկցէ, եւ զբազում ոգիս ջերմեռանդն սիրով բնութեանն ի միմեանց քակտեալ քայքայեսցէ: 11 Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակաւք ի վերայ այսորիկ վաստակեցան. եւ ի մահուն իւրեանց զմիամտութեանն հաստատութեանն զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն Տեառն, մատուցին ի վերայ եկեղեցեաց, եւ ի վերայ մարտիրոսաց, եւ ի վերայ ուխտին սրբութեան արինացն, եւ ի վերայ կարգաց հաւատոցն, եւ ի վերայ ուխտին քահանայութեան, եւ ի վերայ անթիւ ի Նոր ի Քրիստոս մկրտելոցն, ի վերայ բնակի² Տեառն աշխարհիս: 12 Որք այնմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ ինայեցին, ընդ վկայս Քրիստոսի Է Նոցա համար պատուոյ: 13 Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեանն, առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ արէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրեւ Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: 14 Եւ մեք տանս արասցուք, եւ ուրախ լիցուք. զի Աստուած այսոքիւք հաճեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհեսցէ:

1 Յօր. անօրինեսցին

2 Յօր. Բանակի = «Բնակ տերանց Արշակունեաց» Բուլ.